ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

__ _____ 2025 թվականի №____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №516-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը ***որոշում է***.

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնները հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 9-ի N 344-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» №516-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ ԷՄՇ կանոններ) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.
   1) ԷՄՇ կանոնների 16-րդ կետում «փաստացի մատուցված ծառայությունների» բառերից հետո լրացնել «, ԷՄՇ կանոների 54.3-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն որոշված փոխհատուցման» բառերը.
   2) ԷՄՇ կանոնների 54.3-րդ կետում «և ՊԷԱ կայանը» բառը փոխարինել «, ՊԷԱ կայանը և ՎԷԱ կայանը» բառով, նույն կետի 2-րդ ենթակետում «:» կետադրական նշանը՝ «.» կետադրական նշանով, ինչպես նաև նույն կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ ենթակետով.

«3) ՎԷԱ կայանի և միադրույք սակագնային համակարգում գործող սակագնային կարգավորման ենթակա ՊԷԱ կայանի դեպքում վերջիններս Համակարգի օպերատորի կարգավարական կարգադրության գործընթացի շրջանակում չառաքված էլեկտրական էներգիայի արդյունքում բաց թողնված եկամտի դիմաց ՀԾՄ-ից ստանում են փոխհատուցում՝ կարգավարական կարգադրության ժամանակահատվածին նախորդող ամենամոտ և կարգավարական կարգադրության ներքո չգտնվելու օրվա ժամը 11:00-16:00 ժամանակահատվածում փաստացի զարգացրած միջին հզորության (փաստացի տվյալների բացակայության դեպքում կայանի դրվածքային հզորության 70 տոկոս մեծության) և կարգավարկան կարգադրության ժամանակահատվածում փաստացի զարգացրած հզորության դրական տարբերության, կարգավարկան կարգադրության ժամանակահատվածի ժամերի և Հանձնաժողովի կողմից տվյալ կայանի համար սահմանված սակագնի արտադրյալի չափով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Մ. ՄԵՍՐՈՊՅԱՆ**

ք. Երևան
__ _____ 2025թ.